ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5334-Ա « 30 » հոկտեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 8-Ի Հ.651-Ա ՈՐՈՇՄԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆ
ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2026 թվականի սեպտեմբերի 8-ի հ.651-Ա որոշումը.

1. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետին՝ Երևանի քաղաքապետի անունից, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Կանաչապատում և շրջակա միջավայրի պահպանություն» ՀՈԱԿ-ի տնօրենի հետ կնքել գույքի նվիրատվության պայմանագիր՝ համաձայն հ.1 հավելվածի:

2. Գույքի հանձնման-ընդունման աշխատանքներն իրականացնելու համար ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հ.2 հավելվածի:

3. Հանձնարարել հանձնաժողովի նախագահին՝ սույն որոշման ընդունումից հետո, իրականացնել գույքի հանձնման-ընդունման աշխատանքները:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի վրա:

5.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ 

Հավելված 1
Երևանի քաղաքապետի
30.10.2026թ.
N 5334-Ա որոշման

Ց Ա Ն Կ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ «ԿԱՆԱՉԱՊԱՏՈՒՄ ԵՎ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐՄԱՆ (ՆՎԻՐԵԼՈՒ) ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՈՒՅՔԻ

Հ/Հ	Անվանումը	Քանակը	Սկզբնական արժեքը /ՀՀ դրամ/	Հաշվեկշռային արժեքը /ՀՀ դրամ/
1	Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Գետառ գետի վրա (վերջնամասում) ու կից տարածքում կառուցված կեղտաջրերի մաքրման կայան	1	246,342,131.64	246,342,131.64

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**